

ւանդանում մեռնում է, իսկ սււմ կանաչ ճիւղտով են խփում, հիւանդանում, բայց էլի առողջանում է: Սրանք բոլորը մանածողներ՝ ունեն, այսինքն ստիպում են մի կնոջ, մի տղամարդի, որ իրենց առաջնորդէ և ման ածէ այն բոլորի տները, որոնց մասին լանձնարարութիւն են ստացել նրանք Աստուծոյ: Միայն ջերմը ման ածող չունի, ինքն իրեն է ման գալիս: Նա բնակւում է մենաւոր կաղնու մէջ: Ջերմ ունեցողը իւր վրայից պատուում է կանաչ կարմիր կտորներ, տանում այդպիսի ծառերից կապում, յուսալով, որ ջերմը անցնելով կտորին՝ կանցնի կաղնու մէջ և այնտեղ կը բնակուի ու իրեն ազատ կը թողնի:

Ծաղկամայրը, որ ծողիկ հիւանդութիւնն է տալիս, շատ քնքոյշ էակ է, նա արիւն չի սիրում, ուստի և նրան զոհեր չեն մատուցանում:

Կարմիր քամին (рожа) մկնատամը իրենց օջախներն ունեն, որոնց հողը ջրով շաղախելով քսում են հիւանդութեան ենթարկուած տեղի վրայ, իսկօյն լաւանում է:

Ս Ր Բ Ե Ր

Նաճառակ.— Բանանց, խաչակապ, Փիւք, Կիրանց և Քարհատ գիւղերին մօտիկ, Ղուշղուրա գետի աջ ափից քիչ բարձր գտնւում է «ՆաՀատակ» ուխտատեղին: Այստեղ մի ժայռ քար կայ ցցուած, որի մօտ մի Հացի ծառ տարածել է իւր սաղարթախիտ ճիւղերը, բազմաթիւ շորի կտորներով կապկապուած: Մի քիչ հեռու մի աղբիւր է կարկաչում:

Ամեն տարի, առաւելապէս մեծ պատի աւագ չորեքշաբթի օրը, որ ժողովրդի բարբառով Չիք չորեքշաբթի է կոչւում, շրջակայ գիւղերից բազմաթիւ մարդիկ, մանաւանդ երիտասարդներ և չափաՀաս աղջիկներ գալիս են այստեղ ուխտ: Գարնան սկիզբներին Հարսներն ու աղջիկները «Հարսի մանուշակ» (ամենամուգ մանուշակ) են քաղում, զարդարում իրենց կրծքերը և ապա բերում շաղ տալիս ՆաՀատակի գերեզմանի վրայ:

Աւանդութիւնն ասում է, թէ այգ նաՀատակը Վարդան անունով մի կտրիճ երիտասարդ է եղել, որ լեռներում առանձ-

նացած՝ աւագակութեամբ է պարապել: Նա կուռել է վատ և անօրէն մարդկանց հետ, աչն էլ ճակատ առ ճակատ և ոչ գաղտնադողի, թփերի տակից: Երբ նա պատահել է մի անգէն մարդու, նրան ձեռք չէ տուել, այլ միայն ասել է, թէ միւս անգամ այս ճանապարհով անցնելիս գէնք վերցրու հետդ, որ ես կարողանամ քեզ ցոյց տալ, թէ ինչպիսի մայր է ծնել ինձ: Իսկ երբ կուռւմ անձնատուր են եղել, նա վերցրել է թուլասիրտ հակառակորդի սուրը, միջից կոտրել ասելով. «Նամարդ (անագնիւ), դու արժանի չես վրադ թուր կրելու, որ չկարողացար ներկել քո թշնամու արիւնով: Նալաթ (ամօթ) քո տղամարդութեանը, հարամ ըլի փախախդ, գնա ու գլխիդ կնկալ լաչակ կապիր»:

Մի անգամ, վարդավտուին Բանանց գիւղի աղջիկները վիճակ հանելիս դուրս է եկել, որ Նախշուն անունով լսի կոոր աղջիկը Վարդանին է վիճակուած: Այս վիճակը հասնում է Վարդանի ականջին և նա մի տօն օր իջնելով Բանանց գիւղը՝ պարի ժամանակ շորոշ է տալիս Նախշունին և սա սիրով ընդունում է:

Այնուհետև Վարդանը դարնան սկզբներին հարսի մանիշակ, մայիսին կուսանց վարդեր, իսկ ամառը եղա-ծաղիկ փրնջեր կապած ուղարկում էր Նախշունին նրա ջուր գնացած միջոցին:

Նախշունի գեղեցկութեան լուրը հասնում է և Գանձակի խանին, որ վեց մարդ ուղարկում է Բանանց՝ Նախշունին փախցրնելու և իւր մօտ բերելու: Սրանք բռնում են Նախշունին ջրի գնալիս, դնում ձիու վրայ և փախցնում: Գիւղի երիտասարդներից կտրիճները նրանց չետեւից են ընկնում, բայց Նախշունին չեն կարողանում ազատել: Բոթը հասնում է Վարդանին, սա կրակ կտրած յարձակւում է դրանց վրայ Մկեց աղբիւրի մօտ, չորսին գետին գլորում, երկուսին փախցնում և ազատում Նախշունին:

Չուտով վրայ են հասնում Նախշունի ծնողները, Վարդանը յանձնում է նրանց ազատուած Նախշունին, և խնդրում նրա ձեռքը: Ծնողները սիրով համաձայնում են, միայն խնդրում են սպասել մինչև համբարձում, օրինաւոր կերպով պսակը կատա-

րելու: Սակայն խանը իմանալով իւր մարդկանց պարտութիւնը, մեծ զօրք է ուղարկում Ղուշղարի հովիտը, վարդանին գտնելու: Տմբլայ ձորում վարդանը նրանց հետ կռուի է բռնուում և սաստիկ ջարդ տալուց յետոյ ինքն էլ ընկնում: Ընկերները նրան թաղում են սև ժառի տակ: Այս բոլոր լսում է Նախշունը, և չիք չսրեքշարթի օրը ծնողներից ծածուկ դալիս ընկնում է գերեզմանի վրայ և աղի արցունքներ թափում: Նրա արցունքները վտակում են ու կազմում այն փոքրիկ աղբիւրը, որ այնպիսի տիուր կարկաչով դուրս է ցայտում ժայռի մօտից:

Ծնողները դալիս բաժանում են Նախշունին վարդանի գերեզմանից, սակայն նա հիւանդանում և դնում է յաւիտեանականութեան մէջ միանալու նրա հետ *):

Իմամ-զադաւ.—Մի հայ երիտասարդ մի թիւրք խանի տան ծառայելիս չի պատասխանում նրա կնոջ հրապույրներին, ուստի և վերջինս ամբաստանում է նրան խանի առաջ, իբր թէ սա կամենում էր իրեն մոլորեցնել: Խանը անմիջապէս սպանել է տալիս երիտասարդին, որի վրայ լոյս իջնելով ապացուցւում է արդար լինելը, ուստի և՛ հայերը սկսում են պաշտել նրան:

Արթեմ ճգնաւոր.—Սա սարսափելի ցրտերի միջոցին բարձրացել է այժմ իւր անունը կրող լեռու և այնտեղ ճգնել, իսկ սաստիկ շոգերին իջել Երասխի հովիտը և այնտեղ տանջել իրեն: Նրա գերեզմանը այժմ գտնւում է համանուն լեռան վերայ և հրաշագործ է: Երաշտ ժամանակ դալիս քար են տանում այդ տեղից, որ անձրև գայ *):

Պանսը կամ Պանտալէօնը մի թուրք տղայ է եղել, որ ընդունել է քրիստոնէութիւն և իւր քրոջ հետ միասին փախել տանից: Թուրքերը հետևել են նրանց և նահատակել եղբորը այն լիրան վերայ, որ այժմ նրա անունն է կրում, իսկ քրոջը դնում են մի պարկի մէջ և լեռից գլուխում: Սա դալիս

*) Այս ժողովրդական աւանդութիւնից պ. Ս. Տէր-Աւետիքեանը մի գեղեցիկ վէպիկ է շինել «Նահատակը» անունով, որից մենք հանեցինք բուն աւանդութիւնը:

*) Տես՝ Երաշտ.

ընկնում է Մռութի մօտ, այժմեան նահատակի տեղը, ուր վրայ են հասնում թուրքերը և նահատակում:

ԿԱՆԱՐԴՈՒԹԻՒՆ

Կարկսագիր. — Կախարդութեամբ պարապող մարդիկ կան՝ շատ դիւղերում, բայց բոլորից նշանաւոր համարւում է բանանցեցի Գրբաց Աւորը: Սա ունի մի քանի ձեռագիր Սողոմոնի, Վեցհաղարեակ, Հաւախօս և այլ գրքեր, որոնց օգնութեամբ կարողանում է գուշակութիւններ անել, կորուստներ գտնել, գողի տեղն իմանալ, միւսի սէրը գրաւել, սիրահարներին գրգռեցնել միմեանցից և այլն: Բայց այս բոլորը անում են և միւս գրբացները, բանանցեցի Յակոբի փառքը կայանում է ներանում, որ նա միայն կարող է կապել երկինքը կարկտից, աղատել գիւղացու ապրուստի միակ միջոցը կարկաի աւերիչ հարուածներէ: Եւ այս հետեւեալ միջոցով.

Համարձման օրը միւս մատաղների հետ մորթում են և մի չալ աճծ, որի արիւնով ինքը Յակոբը գրում է թղթի վրայ հետեւեալը. «Մեծ և երաշխորհ Տեառն մեր տէրն Յիսուս Քրիստոս յորժամ երթայր յերուսաղէմ, Հարցին ցնա աշակերտքն. «Ինչ արասցուք, յորժամ դալ ամպ կարկտից:» Պատասխանի ետ նոցա տէրն մեր Յիսուս Քրիստոս. «ասացէք Աստուծոյ հետեւ»:

Ահա այս գրուածը ոլորում, անց է կացնում եղեգնի կամ մի ծակ փայտի մէջ, երկու ծայրը ամրացնում և տանում արտի կամ այգու մօտ մի բարձր տեղ տնկում: Ահա այս աղօթքը թող չի տալիս, որ կարկուտը այդ տեղին խփի: Բանանցի, սրա շրջակայ և նոյնիսկ Գանձակի շատ արտերն ու աղբիւնները ամէն տարի այսպէս ապահովագրւում են: Եւ որովհետեւ ապահովագրողների թիւը չափազանց մեծ է և Գրբաց Յակոբը ամենի համար չի կարողանում ինքը գրել, ուստի թող է տալիս, որ ուրիշներ արտագրեն այդ աղօթքը. միայն որպէսզի դա իւր գորութիւնը չկորցնի՝ պահանջում է որ տառ առ տառ արտագրեն, առանց իմաստն ըմբռնելու: